Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ (5 դասժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1)
2. Մեկ լուսանկար 3x4 չափի
3. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
4. Անձը հաստատող փաստաթուղթ
5. « Հանրակրթության մասի» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
6. Ինքնակենսագրություն(Ձև 5)
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հ Հ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. Հ Հ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 19-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00 -ից 15:00 -ը բացի շաբաթ և կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ-ի հոկտեմբերի 22 -ին ժամը 13:00 -ին, ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի միջնակարգ դպրոցում հասցե գ. Շաքի փ.8 շ.3:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 19 75 19 հեռախոսահամարով: